ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
6 փետրվարի 2025 թվականի N 85-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով և 19-րդ հոդվածով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով և 22-րդ հոդվածի 9-րդ մասով՝

ո ր ո շ ու մ եմ.

«Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային, պետական կառավարման ապահովում» ծրագրի 11001 միջոցառման շրջանակում ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2025 թվականի հունվար ամսում աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար դրամական պարգևատրմամբ խրախուսել մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ.փետրվարի 06
ք. Կապան